

Երեսնամյա այսպիսին

**ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

20 հուլիսի

ՆԱԾՄ-ի լոնդոնյան մասնաճյուղի անդամներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Շարագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՆԱԾՄ) լոնդոնյան ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանին:

Հանդիպմանը սրբազան հայրը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց, որ բարերարներ տեր եւ տիկին՝ Դաֆֆի եւ Ալիս Թանդեյանների ու տեր եւ տիկին՝ Շահան եւ Էլիզա Թնջուկյանների ջանքերի շնորհիվ խումբը ժամանեց եւ Հայաստան՝ մասնակցելու ՆԱԾՄ-ի հորեյանական 10-րդ մարզախաղերին:

Վեհափառ Հայրապետը, կարեւորելով երի-

տասարդների կյանքում մարմնակրթությունը, գոհունակությամբ ընդգծեց, որ սպորտը հայորդիների հնարավորություն է ընձեռում նաեւ տարբեր երկրներից մեկտեղվելու հայրենիքում, ծանոթանալու միմյանց հետ, ինչպես նաեւ ճանաչելու իրենց ազգային ինքնությունն ու ակունքները, հաղորդ դառնալու հայրենի հողի սրբություններին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց բարերար հայորդիներին՝ երիտասարդների կրթության ուղղված ծրագրին ցուցաբերած աջակցության համար:

Վերջում Նորին Սրբությունը գրուցեց պատանիների հետ եւ հաջողություններ մաղթեց առաջիկա մարզախաղերում:

21 հուլիսի

Կորեայի Զեոլաբուկ-դո Նահանգի ղեկավարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կորեայի Հանրապետության Զեոլաբուկ-դո Նահանգի ղեկավար Սոնգ Հա-Ջինի գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ հայտնեց երկու երկրների միջեւ հաստատվող գործակցային հարաբերությունների առիթով: Նորին Սրբությունը մաղթեց, որ կորեական պատվիրակության այցը Հայաստան հաջողությամբ պսակվի, եւ համագործակցության արդյունքում ավելի զորանա փոխճանաչողությունն ու նոր խթան դառնա հայ-կորեական կապերի սերունդման համար:

Գաբրիել Բ Կաթողիկոսը անդրադարձավ 2013 թ. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր համագումարի առիթով Հարավային Կորեա կատարած իր այցին եւ երկրում արձանագրված ձեռքբերումներին ու զարգաց-

մանը, ապա իր բարենախառնությունը փոխանցեց Կորեայի ժողովրդին եւ իշխանություններին:

Նահանգապետ Սոնգ Հա-Ջինը եւս ուրախություն հայտնեց հանդիպման համար՝ հաստատելով, որ առաջին անգամ եւ գտնվում Հայաստանում եւ այցի արդյունքում մի շարք դրուսներում մեծ համագործակցության սկզբնավորման հույս ունի: Պատվիրակության ղեկավարը Նորին Սրբությանը ներկայացրեց նաեւ Նահանգի զարգացման ուղղված մի շարք նախաձեռնություններ, ինչպես նաեւ երիտասարդական ծրագրեր:

Զրույցի ընթացքում խոսվեց հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելության, պատմության ընթացքում դժվարությունների դիմագրավման գործում քրիստոնեական հավատի կարեւոր դերակատարության մասին եւս:



21 հուլիսի

ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մինեսոտայի Ս. Սահակ Եկեղեցու հոգեւոր հովիվ Թադէոս քն. Բարսեղյանի: Հայրապետական իր օրհնությունը բերելով ուխտավորներին՝ Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց, որ այցը հայրենիք եւ համայն հայության հոգեւոր կենտրոն առիթ է վերանորոգելու ուխտը, հաղորդ դառնալու նվիրական սրբություններին, ինչպես նաեւ ամրապնդելու կապը Մայր

Աթոռ Ս. Էջմիածնի եւ հայրենիքի հետ: Նորին Սրբությունը բարձր գնահատեց հայորդիների ազգային ոգին եւ հավատարմությունը հանդէպ հայրենի երկրի եւ ազգային հարուստ ժառանգությունը:

Զրույցի ընթացքում Հայոց Հովակապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին եկեղեցական կյանքին, Հայաստանի իրավիճակին եւ դարաբաղաժան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:



23 հուլիսի

Սփյուռնահայ ուսուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարության՝ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին մասնակցից սփյուռնահայ ուսուցիչներին՝ ուղեկցությամբ Երեսնի Կ. Արթուրյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ղեկավար պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպմանը տիար Ռուբեն Միրզախանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ծրագրին 16 երկրից մասնակցող ուսուցիչներին՝ տեղեկացնելով, որ Սփյուռնի ամենօրյա եւ կիրակնօրյա ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների վերապատրաստությունն արդեն 18 անգամ է անցկացվում: Այս տարի այն կազմակերպել է Երեսնի Կ. Արթուրյանի անվան պետական մանկավարժական համալսարանը: Ռեկտորն անդրադարձ կատարեց նաեւ կրթության եւ Սփյուռնի կրթական խնդիրների հանդէպ Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող ուշադրությանը՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը մանկավարժներին եւ նրանց սրբազան առաքելությանը:

Այնուհետեւ սփյուռնահայ ուսուցիչներին ողջունեց եւ իր հայրապետական պատգամը փոխանցեց Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը, ուրախություն հայտնելով հանդիպման առիթով, իր գնահատանքը հայտնեց ուսուցիչներին այդ հանձնառության համար, կարեւորեց նրանց աշխատանքը, ամեն տարի Հայաստանում վերապատրաստվելու ցանկությունը:

Նորին Սրբությունը կարեւորեց հայրենիքի եւ ազգային կառույցների կողմից հայեցի կրթության եւ դաստիարակության գործին ընձեռվող ուշադրությունը՝ ընդգծելով, որ դպրոցն ազգի ինքնության պահպանման ամենակարեւոր կառույցներից է: Այս կապակցությամբ Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, ուսումնական կառույցներին եւ մանկավարժներին:

րին, ովքեր Սփյուռնում կարեւոր առաքելություն ունեն հայ մանուկների կրթության ու դաստիարակության, ինչպես նաեւ հայ ինքնության պահպանության գործում, պատասխանատվությամբ եւ նախանձախնդրությամբ իրականացնում են սփյուռնահայ մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

Կարեւորելով հայ դպրոցի առաքելությունն ազգային կյանքում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով նշեց, որ Սփյուռնում այսօր նահալ է ապրում հայեցի կրթությունը: Գաբրիել Բ Հայրապետն ընդգծեց, որ հայ դպրոցի միջոցով է փոխանցվում ազգային ոգին, այնտեղ է կերտվում հայրրդին եւ ծնող բերում արեւելյան սրբազան արժեքների, պատմության ու հայոց մեծերի ճանաչողությունը, գիտելիքներ, որոնք նպաստում են ազգային ինքնության ու գիտակցության գորգմանը՝ այդպիսով երաշխավորելով նաեւ հետագա ներգրավումը ազգային կյանքում:

Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ հովակապետական իր տարբեր այցերի ընթացքում թեմայակ առաջնորդների եւ հոգեւոր դասի հետ քննարկել է մտահոգիչ այս խնդիրը՝ շեշտելով եկեղեցիների կողքին հայ դպրոց ունենալու անհրաժեշտությունը՝ անտանգ պահելու հայ ինքնությունը: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց, որ առաջիկա տարում Մայր Աթոռում եւս կկայվի իրականացվել նմանօրինակ վերապատրաստման ծրագիր՝ զորակցելու Սփյուռնում ազգային-կրթական հաստատություններին եւ Հայոց եկեղեցու հովանու ներքո գործող դպրոցների մանկավարժներին:

Վերջում Գաբրիել Բ Կաթողիկոսը պատգամեց ուսուցիչներին կենսագործել դարերի խորքից փոխանցված ավանդները եւ կոչման բարձր գիտակցությամբ շարունակել իրենց ծառայությունն ազգին՝ մաղթելով, որ Աստված օրհնի, զորացնի եւ արդյունավոր դարձնի նրանց ջանքերը:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

23 հուլիսի

Սփյուռքահայ ուսուցիչներին



Սկիզբը՝ Էջ 1
Հանդիպմանը ներկա Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Լավաթարյանն ուսուցիչներին ներկայացրեց կրթական ոլորտում կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերը: Սրբազանը մասնավորապես անդրադարձավ հանրակրթական ոլորտում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Մայր Աթոռի միջեւ սերտ համագործակցությանը, ինչպես նաեւ Մայր Աթոռի հովանու ներքո գործող երկու դպրոցների,

մանկապարտեզի եւ Կալվաթայի հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությանը: Վարդան եպիսկոպոսը նաեւ տեղեկացրեց Հայաստանի 140 կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին շարունակական վերապատրաստման եւ ի գորակցություն Սփյուռքի թեմերի կիրակնօրյաների նախանշվող ծրագրերի մասին: Ուսուցիչներին հանգամանորեն ներկայացվեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի ութ հայորդյաց տների օգտաշատ կրթադաստիարակական առաքելությունը:

25 հուլիսի

Արգենտինայի հայոց թեմի երիտասարդներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի հայոց թեմի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցու, Վիսենտե Լոպեսի «Դերմակյան» եւ Հայկական բարեգործական ընդհանուր փութայի «Մարի Մանուկյան» վարժարանների ավարտական (սարահի սաներին՝ ուղեկցությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Մարաքիա վրդ. Ամիրյանի: Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով երիտասարդ ուսանողներին այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իր գնահատանքը քերտեց դպրոցների հոգաբարձուներին ու մանկավարժներին, որոնք ջանքերի շնորհիվ հայ մանկուկները կրթվում ու դաստիարակվում են ազգային արժեքներով եւ ամրապնդվում նախկին սուրբ հավատքով:

Լորին Սրբությունը կարեւորեց նման ուսուցանողությունների դերը՝ ընդգծելով, որ դրանք հնարավորություն են ընձեռում հայորդիներին ավելի խորությամբ ճանաչելու իրենց

հայրենիքը, պատմությունն ու մշակույթը, նպաստում են նաեւ Սփյուռքում հայկական ոգու պահպանմանն ու գործացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց պատանիներին բացահայտել հայրենիքի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորհուրդն ու նվիրակաւորությունը՝ հավելելով, որ աշխարհասփյուռ հայությունը շնորհիվ հայրենիքի է հարստանել, իսկ ուժն է գործությունն ստացել է Սուրբ Էջմիածինից:

Վեհափառ Հայրապետը պատգամեց երիտասարդներին փառաստույթն ու նախնախնորությունն զրուցելու իրենց ուսումնառության մեջ, որպեսզի իրենք ազգի արժանավոր գավակներ՝ կարողանան ապագայում իրենց ազգակցներին ծառայությամբ օգտակարություն բերել նաեւ հայրենիքին եւ Մայր եկեղեցուն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

26 հուլիսի

Սեբեոս Գեորգ Դադաթյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 2016 թ. տղամեծի ղարաբաղա-արցրեքական զորքերի շվման գծում մարտական գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած սեբեոս Գեորգ Դադաթյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ՀՈՒ հոգեւոր առաջնորդ Կրթանես Եպս Աբրահամյանի եւ Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանի:

ճայության ընթացքում վիրավորում ստացած իր զավակներին, որպեսզի կարողանան շարունակել ապրել իրենց լիաբժեք կյանքով:

Հայրապետական իր օրհնությամբ եւ բարեաշուք ապացիանման մաղթանքով՝ Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ հակառակ բոլոր տեսակի կորուստների՝ հայոց արիամիր զինվորները ամուր են հոգով եւ շարունակում են



Կրթանես եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հայրենյաց պաշտպանին, ով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ եւ Կալվաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության աջակցությամբ առաջիկայում անհրաժեշտ բուժումը կստանա Հնդկաստանում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց քաջարի հայորդուն՝ ընդգծելով, որ մեր ժողովրդի, պետության եւ Սուրբ եկեղեցու նվիրակաւ պարտքն է հոգավ եւ հնարավորինս օժանդակել հայրենիքի պաշտպանության ծա-

պահպանել լավատեսությունը՝ իրենց բարձր ոգով խառնալվումով գինակից եղբայրներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այս առիթով իր գնահատանքը փոխանցեց Կալվաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչությանը, ինչպես նաեւ դեսպան Արմեն Մարտիրոսյանին՝ հայորդու բուժման նպատակով ձեռնարկված քայլերի համար:

Իսկ ՀՀ ՀՈՒ հոգեւոր առաջնորդը շնորհակալություն հայտնեց Լորին Սրբությանը՝ Հայոց բանակին ցուցաբերվող մշտական գորակցության համար:

27 հուլիսի

ՀՀ-ում Ռուս եկեղեցու համայնքների կառավարչին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Ռուս Ուղղափառ եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ավանիայի Լեոնիդ եպիսկոպոսին:

Չորսից ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջեւ ամկա ջերմ հարաբերություններին եւ համագործակցությանը: Մասնավորապես խոսվեց Հայաստանում Ռուս եկեղեցու համայնքների հոգեւոր կյանքի կազմակերպմանն առնվող հարցերի եւ գործակցության ապագա ծրագրերի մասին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Լորին Սրբությանը Կիրիլ Պատրիարքին փոխանցեց եղբայրական իր սերն ու ողջույնը:

Իր հերթին Լեոնիդ եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ մշտապես ցուցաբերվող հոգատարության եւ ուշադրության համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե Տ. վրդ. Անասյանը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալագրեր «Հայկական ակնարկության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝ գործունեության 25-ամյակի առիթով

Հուլիսի 23-ին Ս. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց «Հայկական ակնարկության նախագիծ» բարեգործական հիմնադրամի ղեկավարներին, ակնարկումներին եւ բարեարարներին:

Բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի պատասխանատու Նունե Եղիազարյան Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց նախագիծը սկզբնավորման պատմությունը եւ անցած քսանհինգ տարվա գործունեությունը, խոսեց Կապանում մարգարիտի ակնարկումների կենտրոնի բացման մասին:

Հիմնադրամի հիմնադիր-նախագահ ակնարկով Ռոբեր Օհանեսյան իր հերթին եւ անդրադարձավ բարեգործական ծրագրի մտահղացմանը՝ երախտագիտությամբ ինչեղով ծրագրին մասնակցի բոլոր բժիշկներին եւ անհատ բարեարարներին: Նա նաեւ ընդգծեց, որ ծրագրի բարեխաղը իրականացմանը մեծապես նպաստել է այն, որ ի սկզբանե հիմնադրամը ստացել է Հայոց եկեղեցու օրհնությունը եւ մշտապես համագործակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:



Այնուհետեւ հիմնադրամի գործունեության 25-ամյակի առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր օրհնությունը բերեց Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ ծրագրի առաջին օրվանից քաջ ծանոթ է հիմնադրամի գործունեությանը, որը տիար Ռոբեր Օհանեսյանի կմրյալ ջանքերի շնորհիվ՝ հայրենիքի կյանքի ոճվարին

գարյանին, ինչպես նաեւ բոլոր այն բարերար անձանց ու ակնարկումներին, ովքեր մասն են բաժնի ունեն այս օրինյալ ծառայական գործում:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավետ գործունեություն ու բարի ընթացք մարդեց հիմնադրամին եւ Հայկական ակնարկության նախագիծը կողմից ձեռնարկված բոլոր նոր ծրագրերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Նորած Վահրիք քահանային

Հուլիսի 25-ին Ս. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց եւ իր օրհնությունը տվեց Նորած Վահրիք քահ. Բարդապարյանին: Վերջինս ձեռնադրվել էր հուլիսի 23-ին Ապարանի Ս. Խաչ եկեղեցում՝ ձեռամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Գաբրելի արք. Բեջեյանի:

Նորած քահանային Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանը՝ հայցելով Հայոց Հովակապետի օրհնությունն ու հայրական պատգամը:

Լորին Սրբությունը, շնորհավորելով երիտասարդ եկեղեցականին՝ ձեռնադրության առիթով, հորդորեց խոնարհությանը եւ ամենայն հանձնառությամբ շարունակել ծառայությունը Հայոց եկեղեցուն եւ հավատավոր ժողովրդին:

Քառասուրյա պաշտեցողության շրջանը Մայր Աթոռում անկեղծացնելուց հետո Վահրիք քահանան հոգեւոր սպասավորության կվերադառնա Գերմանիայի հայոց թեմ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհվեց Գրական փաստագրության միջազգային ակադեմիայի «Ռսկե մեդալ»



երջայության՝ հիմնված միենույն՝ քրիստոնեական արժեքների վրա»,- Լեյզե ակադեմիայի նախագահը՝ Նորին Սրբությանը փոխանցելով ակադեմիայի պարգևը:

Շնորհակալություն հայտնելով ակադեմիայի շնորհած պարգևի համար՝ Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց պատվիրակության անդամներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց կազմակերպության գործունեությունը՝ ուղղված հոգևոր-մարդասիրական արժեքների տարածմանը: Հայոց Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց նաեւ ակադեմիայի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ լույս ընծայած աշխատություններին՝ ընդգծելով այդպիսի հրատարակությունների կարևորությունը նման հանցագործությունների կանխարգելման գործում:

Գարեգին Բ Կաթողիկոսը մարգեց ակադեմիայի նախագահ Վալերի Նարիսյանին եւ ակադեմիայի անդամներին Աստծո առաջնորդությունը՝ իրենց բարի եւ օգտաշատ Նախածննդություններում, եւ արգասավոր գործունեությունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եպս հաջատարյանը եւ վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Հուլիսի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Գրական փաստագրության միջազգային ակադեմիայի պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՌԴ վաստակավոր իրավաբան, ակադեմիայի նախագահ Վալերի Նարիսյանի: Այն նպատակն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնել, Գրական փաստագրության միջազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ, Վեհափառ Հայրապետին շնորհված «Ռսկե մեդալը»:

«Ձերդ Սրբություն, որը քրիստոնեական շարժման ակնավոր գործիչ եք: Մենք բարձր ենք գնահատում Ձեր Ներդրումը հայա-ուսական հարաբերությունների ամրապնդման գործում: Դա վկայությունն է Ռուսաստանի եւ Հայաստանի ժողովուրդների

նեությունը՝ ուղղված հոգևոր-մարդասիրական արժեքների տարածմանը: Հայոց Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց նաեւ ակադեմիայի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ լույս ընծայած աշխատություններին՝ ընդգծելով այդպիսի հրատարակությունների կարևորությունը նման հանցագործությունների կանխարգելման գործում:

Գարեգին Բ Կաթողիկոսը մարգեց ակադեմիայի նախագահ Վալերի Նարիսյանին եւ ակադեմիայի անդամներին Աստծո առաջնորդությունը՝ իրենց բարի եւ օգտաշատ Նախածննդություններում, եւ արգասավոր գործունեությունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եպս հաջատարյանը եւ վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալագիրը Արցախի նախագահ Բակո Սահակյանին

Հուլիսի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալագիր է հղել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին՝ նախագահի բարձր պաշտոնում ընտրվելու առիթով:

«Արցախյան հերոսական ազատամարտի տարիներից սկսյալ՝ ռազմաքաղաքական պայտաճակատում պաշտոններում Դուք կարելու ներդրումը բերեցիք: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության եւ անկախ պետականության ամրապնդման գործում: Անցած տարւ տարիների ընթացքում, որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ, Դուք Ձեր ջանքերն առաջացրեցիք՝ ի նպաստ արցախահայության բաղաժապակ, մշակութային ու տնտեսական կյանքի առաջընթացի ու զորացման:

Ուրախ ենք, որ Արցախի Հանրապետու-

թյան սահմանադրական փոփոխություններից հետո Արցախի մեր ժողովուրդը՝ ի ղեկն երկրի Ազգային ժողովի, պետությունը ղեկավարելու պատասխանատու առաքելությունն առաջիկա տարիների դարձյալ վստահեց Ձեզ՝ բարձր գնահատելով Ձեր հայրենասիրությունը, հմտություններն ու կարողությունները եւ հարուստ փորձառությունը:

Մեծարգո՝ նախագահ, Միաձայն Սուրբ խորանի առաջ Մեր արդյունքն ենք վերադառնում առ Բարձրյալն Աստված, որ Տերը բարեգաղթի Ձեր առաքելությունը եւ շնորհի նշանակալի նոր ձեռնդրումներ՝ համուն Արցախի աշխարհի խաղաղության եւ բարեքեմ մեր ժողովրդի ակնյալագ ու բարձր կյանքի»,- ավանդ է Ամենայն Հայոց Հայրապետի ուղերձը:

Նորին Սրբությունը նաեւ հայցել է ամենագոր Աստծո օրհնությունը եւ հովանին Արցախի ազատասեր ժողովուրդին:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրենությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվել է Նոր նշանակում:

Մայր Աթոռի միջնեկեցական հարաբերությունների բաժնի եւ հրատարակչական բաժնի տնօրեն Զահե Ծ. վրդ. Անանյանն ազատվել է հրատարակչական բաժնի տնօրենի պարտականություններից:

Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Արարատ քնն. Պողոսյանը համատեղության կարգով նշանակվել է հրատարակչական բաժնի տնօրեն:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳ

Սկիզբը՝ թիվ 10-13

Եվթանագիայի մասին վեճերը շարունակվում են, օրեցօր ավելանում նրա օրինականացման փորձերն ու հաջողությունները, իսկ թե ինչ կլինի մոտ ապագայում, հայտնի չէ: Միայն մի բան պետք է հիշել՝ մարդու հետագա գոյությունը կախված է նրա հոգևոր վիճակից:

Արդեն վերջ նշել ենք, որ Եվթանագիայի մասին վեճը ծագել է անտիկ ժամանակներում: Ընդ որում՝ տարբեր ժողովուրդների մշակույթներում այդ հարցը տարբեր լուծումներ է ունեցել:

Երիտոնյայանը եւ նրանք, ովքեր ցանկանում են պահպանել Եվթանագիայի եւ աշխարհված մահվան հանդեպ իրենց ընդդիմությունը, տարբեր կերպ են պատասխանում վերոհիշյալ մարտաիրավորներին: Պաշտպանության ձեռնիք մեկը վերահաստատում է քրիստոնեական պնդումները մարդկային կյանքի արժեքի եւ սպանության անարդարացիության մասին: Վատկանի էկոմենիկ երկրորդ ժողովում Կաթոլիկ Եկեղեցին դատապար-

տեց կյանքի հանդեպ գործվող ոճիրները, ինչպես, օրինակ, ցանկացած տեսակի սպանությունը, ցեղասպանությունը, արհեստական վիժեցումը, Եվթանագիան կամ կամավոր ինքնասպանությունը: Կյանքը սուրբ է եւ Աստծո պարգևն է, ինչը մարդը կոչված է պահպանելու եւ պողոթնի դարձնելու: Կյանք խլելը հակահռակ է աստվածային սիրո գաղափարին եւ մերժում է Աստծո ծրագրի համաձայն ապրելու անձի պատասխանատվությունը: «Ի՞նչ կյանքը, որի վրա են ունեմ բացարձակ սեփականության իրավունք, միայն իմը չէ»,- գրում է ռուս ականավոր փիլիսոփա Ն. Բերդյաևը,- նաեւ՝ ուրիշ կյանքը նախեստաջ կյանք է, որ պատկանում է Աստծուն, Նա միայն ունի բացարձակ սեփականության իրավունք դրա

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱԼՔՈՒՄ

«Բան գովեստից
յաղազս Փոխման ամենաարթուրոյ
եւ փառաւորեալ միշտ կուսին
Մարիամու Աստուածածնին»

Գուսանական խաղերն ու թատերական ցուցանքները ժողովրդական զանգուածների ամենասիրելի զբաղումներից էին նաեւ քրիստոնեության ընդունելուց յետոյ: Կրօնական եւ ժողովրդական տոներին ուխտավայրերում գուսանների մասնակցությունը մեծապէս նպաստում էր համընդհանուր ուրախութեանը: Բայց Եկեղեցին խանդով պ վերաբերում անցեալի մնացուկների կենսականութեանը, աշխատում էր արմատախիւ անել, մերժել ժողովրդական կեանքից, որ, ինչպէս ցոյց տուեց յետագայ իրողութիւնը, դրանք շարունակեցին կենցաղավարել:

Այդ երեւոյթի դէմ պայքարել են տարբեր ճանապարհներով: Նիկոմիդիայի սուրբերը (Յայսմաւ. օգոստ. ԻԸ) թատրոն գնացին «գի բազմութիւն ամբոխից ժողովեալ էին անի, եւ ուսուցանելի գիւսատսն, եւ բա-



գումը հաւատացին նոցին վարդապետութեամբն ի Զրիստոս, եւ դառնային ի տեսութեմ թատրոնի»:

Բայց ըստ երեւոյթի լինում էր եւ չսպասուածը: Նիկոմիդիայի սուրբերը թատրոն գնացին տեսնելով, որ բազմութիւն է այնտեղ խմբուել, եւ շատերը հաւատացին նրանց քարոզութեամբ: Մի այլ պարագայում թատերախաղը նպատակին չի ծառայում: Գուսան Պորփիրոսին «մկրտում են»՝ եպիսկոպոս, քահանաներ, սարկաւագուց՝ «որպէս այլան առնելով զքրիստոնեցի»: Սուրբ եպիսկոպոսն ասում է ծաղրանքով. «Յանուն Հօր, եւ Որդոյն եւ սուրբ Հօգոյն մկրտի Պորփիրոս»: Բայց անհատները չգիտեին, որ «անուն սուրբ Երրորդութեան անայլանելի եւ աննախաւտի է»: Ուստի չէն նշան եղաւ Աստծոց, եւ սուրբ Հօգին իջաւ Պորփիրոսի վրայ:

Իսկ հանդիսատեսները խորհում էին՝ «Եթէ ի տուտ մկրտութիւնն Պորփիրոսի այսպիսիք գորութիւնք եղեն, ո՞րչափ եւ առաւել որը ճշմարտութեամբ մկրտին» լինին նշանք երկնից»։ Եւ շատերը «անտի հաւատացին ի Զրիստոս եւ ելեալ ի թատրոնէն գնացին ինքնութեամբ յեկեղեցին (Նոյ. Ե. «Վկայութիւն Պորփիրի գուսանի յեփեսոս»)»:

Անշուշտ, բացի գործնական պայքարից՝ եղել է նաեւ գիտատեսական մշակման անհրաժեշտութիւնը: Զրիստոնեութեան վերջնական յաղթանակից յետոյ նոյնպէս շարունակել է գոյատեւել եւ ընդդիմանալ թատրոնը:

Նշանաւոր մատենագիր եւ Հայոց Կաթողիկոս Յովհան Մանդակունին (478-490) ցուով ու զայրոյթով էր նկատում, որ հեթանոսական դարաշրջանի լիարժեք արտայայտութիւն լինելով՝ գուսանական ներկայացումները հակառակ էին քրիստոնեական բարոյական ըմբռնումներին՝ տվորեցնում էին ամբարտաւանութիւն, հայհոյութիւն, նենգութիւն, չարահաւարութիւն, չարակնութիւն, նախանձ, բամբասանք, չարիքներ: Հայրապետին մտահոգութիւն էր պատճառում դրանք յաջողութիւնը ժողովրդական լայն խաւերի շրջանում, եւ նա մտածում էր՝ ի՞նչ միջոցով հնարարուր կլին դադարեցնել «ցոյացող բոցի ահեղ տուջորումը» («Վասն անօրէն թատերաց դիւսկանաց...» ճառը. «Յովհաննու Մանդակունոյ Հայոց Հայրապետի ճառը», Վենետիկ, 1836, էջ 123-129):

Գրիգոր Նարեկացին նոյնպէս անդրադարձել է երեւոյթին՝ արձանագրելով.

Հաւատացեալ յամենեցունց,
թէ բաւական եւ յամենայնի,
Կաթնարթից հասակաց, տիոց
պատանեաց,
Ստաց վայրենեաց, ստամբակաց
զոռոզաց,
Միջև զի առ թատերս տեսարանաց
եւ առ կոյտս խանրիճարանց
բազմութեանց
Եւ կամ առ կաքաւս կայից
Մնախորժականաց կամաց հզարիդ՝
Ո՛չ եւ մոռացեալ:
Մատենա, ԼԱԳ.

Բայց, հակառակ հաւանքներին, բառացիորեն բազմաթիւ փաստեր են պահպանուել, որոնք հաստատում են գուսանական արուեստի ամենատարբեր դրսեւորումների անընդհատականութիւնը դարերի յոլովոյթին Ե՛ւ «նստելն ի թատրոն», Ե՛ւ «գուսանամուտ լինելը» կատարելագոթեամբ իրապիտուելը, այլ եւ այլ «սաստաւայական» ցոյցերը: Հանգամանք, որ ժողովրդական լայն խաւերի հետաքրքրութեան անմիջական վկայութիւնն էր:

Շարունակութիւնը՝ էջ 4

Եվթանագիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

վրա: Այն նաեւ իմ մերձավորների, այլ մարդկանց, իմ ժողովրդի, հասարակության կյանքն է, վերջապէս՝ ողջ աշխարհի, որի իմ կարիքն ունի»,- եզրակացնում է նա: Անհատական սեփականության բացարձակ իրավունքի սկզբունքը, ընդհանուր առմամբ, կեղծ սկզբունք է: Անկախութեան այն տեսակը, որ Ջոն Ստյուարտ Միլն է պաշտպանում, մերժվում է Եկեղեցու աստվածաբանական ավանդութեան կողմից: Որոշ քրիստոնյա բարոյագետներ նաեւ վիճարկում են այն տեսակետը, թէ տառապանքից ազատագրումը պետք է միշտ գերազույն նպատակ լինի: Ոչ ոք չի մերժում, որ տառապանքի հարթախորումը կարելու նպատակ է, բայց որոշ հեղինակներ նշում են, որ քրիստոնեական համայնքն ավանդաբար վարժեցրել են սպա-

ռազինել է իր անդամներին՝ տոկալու տառապանքին եւ գրկանքին: Որպէս օրինակ՝ մատնանշվում է քրիստոնեական հավատի կենտրոնական կերպար Օրիստոսի անձը: Հիսուսը խաչի վրա մահացավ տառապանքի մեջ, եւ մարդկային տառապանքը կյանքի վերջում մեզ կապում է Զրիստոսի ապրած տառապանքին: Սա, ի հարկէ, չի նշանակում, թէ քրիստոնյաները պետք է տառապանք փնտրեն եւ հրաժարվեն ցավազրկող դեղեր ընդունելուց, սակայն այն հնարավորություն է տալիս, որ տառապանքը բարերար ազդեցություն ունենա անձի վրա: Այն առիթ է ընծեռում մարդուն՝ Աստծուն ավելի մերձեցնելու: Տառապանքը նաեւ դրական տեսանկյունից է ընկալվում:

Շարունակութիւնը՝ էջ 5

«Խոհեմությունն այսպես ամենքիս վախկոտ է դարձնում...»:
Վ. Շեքսպիր, «Համլետ»

Այս տարի լրանում են եղիշե Չարենցի ծննդյան 120-ե ամա-
ջին բանաստեղծության տպագ-
րության 100-ամյակները, միա-
ժամանակ լրանում է նրա եղերա-
կան մահվան 75-րդ տարեկիցը:
Այս տարեթվերը մշտապես տա-
րեցտարի ուղեկցում են իրար՝
ընթերցողի գիտակցության մեջ
պահելով Հանճարի Շննդյան, Ա-
րարման եւ հաջերկրյան խորի-
դաշնաները:

Մեր ժողովրդի մեջ Հոլմանսեն
Թումանյանը մշտապես կենդանի
է ու ապրող: Մեր ժողովուրդը,
հատկապես նրա արեւելահայ
հատվածը, ասես թումանյանա-
կանացված լինի: Ինչո՞ւ: Ե այդպես.
որովհետեւ Թումանյանը ճշգրիտ
գտավ Ազգային Բանը: Նաեւ այն
պատճառաբանությամբ, որ Թու-
մանյանի խոսքը մանկուց հաս-
ցեագրվում է մեզակից յուրաքան-
չուրին եւ ինքնաբերաբար մեր
մեջ դառնում մայրենի լեզվի կո-
րիզ, խորիզ, ազգային մտածողու-
թյան հունը, ապաւեն՝ ոգի ու շուն:

Չարենցի երեսույթն այլ է: Չա-
րենցը հասուն տարիքի բանաս-
տեղծ է: Միայն բարձր գիտակե-
ցությունն ու հոգեկան հարուստ
ապրումը կարող են նրան դարձ-
նել ճանաչելի եւ մասամբ միայն
հասանելի: Չարենցն արտա-
կարգ բարդ երեսույթ է թե՛ լեզ-
վով, թե՛ խորքով, թե՛ գեղագի-
տությամբ, թե՛ ժամանակային ու
տարածական ընդգրկումով, թե՛
բազմաշերտ համարողություննե-
րով եւ թե՛ հայ ու համաշխարհա-
յին գրականության հետ ունեցած
ստեղծագործական առնչություն-
ներով:

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



Մեր ժողովրդի թումանյանա-
կանացման բացառիկ երեսույթի
հետ նույնքան բացառիկ է, որ
մեր ժողովուրդը Նաեւ չարենցա-
կանացավ: Չարենցն արթնացավ
ու ապրեց ոչ միայն իր ծանոթ ու
հայտնի բանաստեղծություննե-
րով, ոչ միայն «Ծիածան»-ով ու
«Տաղարան»-ով, այլեւ «Գիրք
ճանապարհի»-ով եւ կյանքի վեր-
ջին տարիներին գրած բանաս-
տեղծություններով ու պոեմնե-
րով: Չարենցը շարունակաբար
ընթերցվեց ու տարածվեց: Սա
նշանակում է, որ դեպի Չարենցը
տանող ճանապարհը շարունակ-
վում է, եւ ճանապարհի ուղեւոր
է ամբողջ ժողովուրդը թե՛ մայր
ըրազրած անենք Չարենցի ծե-
ռագիր անտիպ ժառանգու-

թյանն ու հարակից այլեւայլ
խնդիրներ:

◆◆◆

Կերչին շրջանով Ե. Չարենցի
անունը հաճախակի է հոլովվում
ՀԼՄ-ների կողմից եւ հայոց Հան-
ճարն ասես մի նոր փորձություն է
անցնում հիմնականում անտե-
ղյակ ու անիմա նոր սերնդի կող-
մից: Դրան նպաստում են հաւ-
նությունը գրգռող հրապարա-
կումները, եթերով հնչող կատա-
րյալ անտեղյակ մարդկանց հայ-
տարարությունները, Չարենցին
ոչ իր բնական նկարագրով, այլ
ձեռնախելած ներկայացնելու ո-
ւման ընդգծված ջանքերը, Չա-
րենցի հեղինակության հաշվին
արտառոց եւ արտասովոր երե-
ւալու գրական աղանդավորների
գեղեկությունները:

Նիշի՞ մասին է խոսքը, Նախ՞ չա-
րենցյան ձեռագրերի՞ ինքնագիր

անտիպ ժառանգության մասին,
ինչի արձագանքները եկան հեռու-
ներից:

Ա. Անտիպ ժառանգությունը

Գրականագետ Ջեյմս Ռասելը
հանդես է եկել Չարենցի անտիպ
ժառանգության հրապարակմամբ:
Նրա հոդվածներն ինքնին գիտա-
կան ոչ մի արժեք չունեն չարենցա-
գիտության համար, որովհետեւ
դրանցում միտումնավոր օրվում է
Չարենցին եւ վերագրվում ինչ-ինչ
մտայնություններ, որոնք ակն-
հայտ վերաբերմունքով կոչված են
սոսկ վարկաբեկելու 20-րդ դարի
համաշխարհային գրականության
խոշորագույն ներկայացուցիչնե-
րից մեկին:

Այն, որ Չարենցի ժառանգու-
թյունը վաղուց է դարձել Նաեւ այ-
լազգի գրականագետների ու-
սումնասիրության առարկա, Նո-
րությունն է: Չարենցի միջազգա-
յան գործընթացը շարու-
նակվում է:

1997 թ. նոյեմբերի սկզբին Նյու
Յորքի «Կոլումբիա» համալսա-
րանը կազմակերպեց Չարենցի
100-ամյակին նվիրված միջազ-
գային գիտաժողով: Նույն թվա-
կանի նոյեմբերի կեսերին համա-
ման միջոցառում կազմակերպվեց
Բեյրութում, եւ Չարենցը նորովի
հնչեց արաբախոս աշխարհում
(նոր թարգմանություններ, զեկու-
ցումներ, գրքեր): Չարենցն առաւ-
ծին մեծադիր հրատարակու-
թյամբ ծանոթ է իսպանախոս աշ-

խարհին: Ինչպես նախկինում,
այնպես եւ այսօր Չարենցը լայն
հնչողություն ունի մուսախոս մի-
ջավայրում՝ հրատարակվել են
թարգմանությունների բազմաթիվ
գրքեր (թարգմանիչներ՝ Բոլոնով,
Ամատովա, Պաստերնակ, Եվ-
տուշենկո եւ ուրիշներ), լույս ե-
կան են մեծագրություններ, գիտա-
կան եւ հանդիսավոր նիստեր են
գումարվել Մոսկվայում, Սանկտ
Պետերբուրգում եւ Նախկին Միու-
թյան բոլոր մայրաքաղաքներում:
Դրա վկայություններն են այլազ-
գի բազմաթիվ գրողների ու գրա-
կանագետների հուշերն ու հրա-
պարակումները, որոնց մի մասը
տպագրվել է Նորթես լույս տեսած
գրքում (տե՛ս «Չարենցի հետ: Հու-
շեր», 2-րդ մաս, Ե., «Նաիրի»,
2008, 440 էջ: 1-ին մասը լույս է
տեսել 1997-ին, 424 էջ: Կազմող եւ
խմբագիր՝ Դ. Պասպարյան):

Այնպես որ, Ջ. Ռասելը ո՛չ առա-
ջինս է, ո՛չ էլ վերջինը, որ փոր-
ձում է մոտենալ Չարենցին ու
Չարենցի աշխարհին: Բայց սույն
գրականագետն անսպառ թերու-
թյունների հետ մեկտեղ ունի
Նաեւ առավելություններ եւ այլն էլ՝
շա՛տ մեծ, որովհետեւ նրա ձեռ-
քին է հայտնվել Չարենցի վերջին
տարիների անտիպ ժառանգու-
թյունը: «Journal of the Society for
Armenian Studies» ամսագրում
տպագրած «Չարենց մարգա-
րեն» հոդվածում Նա տեղեկաց-
նում է. «1998 թ. սեպտեմբերին,
երբ ես երեսունվեցի գիտաժողովի
մասնակցելու նպատակով,
Գետորգ Եմինի որդին՝ Արտաշես
Եմինը, ով գիտեր Չարենցին, ինձ
վստահեց Չարենցի երկար
թանկված, երբեմն չտպագրված
բանաստեղծությունների կապու-
ցը» (2000, թիվ 11, էջ 28):

Շարունակությունը՝ էջ 6

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱԹՈՒՆՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՐՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 3

Այդ առնչությունները Գեորգ Արվըն ժամա-
նակին գրել է. «Հայ դրամատուրգիան ու
թատրոնը ամբողջ միջնադարում շարու-
նակել են իրենց գոյությունը գուսանական
երգերի, գուսանական կատարումների ձե-
լով... Ե այդ թատրոնի դեմ մղած պայքա-
րում է, որ Եկեղեցու ներկայացուցիչներն
ուժեղացնում են կրոնական միտքերի հե-
րի բեմադրությունները - կորելոր համար
ժողովրդին թատրոնից եւ նրանց ուշադ-
րությունը գրաւելու թատերականացում
կրոնական ծիսակատարությունների
վրայ»:

Սա եղել է Հայ Եկեղեցու՝ բոլոր դարերի
մտահոգությունը: Բայց արմատախիլ անել
դարձրել մշակութային ասանդությունը՝
հեշտ լուծուղով խնդիր էր: Գուսաններն ու
երգիչները հազուադեպ էին իրենց հե-
թանազական արարներով անհանգստե-
ցում էին հոգեւոր հայրերին: ԺԲ-ԺԴ. դա-
րերը եղան հայ գուսանական ընթերցու-
թեան բուռն կերպի շրջան, ստեղծուցին
համաշխարհային մակարդակի բանաս-
տեղծական շարքեր՝ հայրենիքի: Հենց ժո-
ղովրդական մշակույթի մեջ ունենալով խո-
րունկ արմատներ՝ գուսանական արուես-
տը դեռես շատ երկար պահպանել է հե-
տաքրքրականությունը: Ովստավայրերի,
հրապարակների ներկայացումների
հանդիսականի պակաս չէր լինում: Գու-
սանները փնտրում էին ամենուր: Միջ-
նադարեան «Տխուր թագավոր» առակի
հերոսներից մեկին ուրախացնելու նպա-
տակով բերում են «բազում գուսանս եւ եր-
գեցիկ» (Ն. Սառ, Ժողովածույց առակաց
Կարոյան, Լիւթը առ ի պատմութիւն մի-
ջին դարուց դպրութեան հայերէնի, Մասն
Բ. Բնագիր, Ս. Պետերբուրգ, ՌՅԻՂ):

(1894), էջ 288): Թագավորներն ու իշխա-
նները շարունակել են իրենց պալատներում
ունենալ գուսանական խմբեր, ժողովրդա-
կան ու եկեղեցական տոները ճոխացնել
նրանց մասնակցությամբ:

ԺԳ. դարի ֆրանսացի ուղեգիրը նկա-
րագրել է 1248-1270 թթ. իր իշխանի ուղե-
որուրդի ընթացքը Երուսաղեմ: Ճանապար-
հին տրանք ականատես են եղել Ամսիոնի
Բեեթմոնը 2. իշխանին ուղեկցող երեք հայ
գուսան-երգայրների ներկայացումին:
«Երբ սկսում էին հնչեցնել փողերը, զոգ-
ցես, լճակի մեջ կարապետի ձայներ լի-
նեին, եւ որ այնքան անոյշ մեղեդի է շնոր-
հակ եղանակ էր, որ լսելն իսկ սքանչա-
նում էր» (Ֆրիկ, Դիան, Ի լույս ընծայեց ա-
ռաջին անգամ ամբողջական բնագրով, ու-
սումնասիրությամբ, ծանոթագրություննե-
րով, յաւելումներով եւ բառարանով Տի-
րայր արքեպիսկոպոս, Միաբան Սայր Աթո-
ռի Ս. Էջմիածնի, Նիւ Եօքը, 1952, էջ 222-
223):

Այստեղ հետաքրքրական են երկու հա-
նգամանք.

ա. հայ գուսանների մասնակցությունը
բուքի ուղեւորությունը,
բ. գուսանական երաժշտությանն օտար
մատենագիր տուած գնահատականը:


Վերջինս նկարագրում է գուսանների
ցուցադրանքը. «Երբեք ես գալմանց առ-
թող պարեր պարեցին: Նրանց ոտքերի
տակ փռում էր մի հիւստածք (ֆորգ), եւ
դառնում էին (գլխի վրայ), ինչպէս որ
(կանգնած) էին, եւ նրանց ոտքերը կրկին
գալիս էին (հանգնում) գորգի վրայ: Երկու-
ցը գլուխները դեպի յետ ծածծ էին (ցուա-
կում) եւ նույնը Նաեւ առաջ եղաւորը, եւ երբ
նրան ստիպում էին գլուխն առաջ թեքած
ցատկել (մեքքի վրայ), երեսն էր խաչակն-

քում, երկուր կրելով, որ վիզը չկտորե-
րանալու պահին» (անոյ):

Գեորգ Հալաշեանի «Դերսիմի հայերի
ազգագրությունը» աշխատության մեջ
պատկերված է կրկեսային ներկայացում.
որ աւելի ուշ շրջանի է վերաբերում: Գա-
գաններ վարժեցնողին օգնում են երկու ե-
րաժիշտ՝ սրինգով եւ սազով: Պարում էին
Բեռի Արքը, Աղուեւը, Փոքր հարս Նապաս-
տակը եւ Սկիւռը, որ սպասելով իրենց
հրաւերին՝ հերթով «Ելոյթ» էին ունենում՝
լիովին համահունչ պարեղանակին: Յատ-
կապես պարի «շնորհալի շարժումներով»
առանձնացել է Անլետն ու Սկիւռը: Ընդ
որում, պարզուրել է, որ «Սկիւռները սիրա-
հար են երաժշտության, սիրում են ի մաս-
նաւորի սազի եւ սրնգի միջոցով եղանա-
կուած մեղեդիները, սիրոյ երգերը եւ պա-
րում էին խանդավառուած» («Հայ Ազգա-
րութիւն. Բանահիւսութիւն: Նիւթեր եւ ու-
սումնասիրութիւններ», Եր., 1973, էջ 167):

Ի հակադէպ հեթանոսական գուսանա-
կան արուեստի՝ մատենագիրներն աշխա-
տել են ստեղծել ոչ պակաս հետաքրքրա-
շարժ գործեր, թատերական ներկայա-
ցումները նմանակող-լիքեցնող տեսարա-
ններ: Այստեղ, իբրեւ այլընտրանք, հանդես
են գալիս տաղերգուները, մշակում ինն
բանահիւսական դիպաշարեր, որոնք, ինչ-
պես իրաւամբ նշել են հետազօտողները
(Կ. Կոստանեան, Մ. Աղայաբեկեան, Ը. Նա-
գարեան, Վ. Ներսիսեան...), կարելի էր ըմ-
բռնել, մեկնաբանել ըստ նախապիտու-
թեան՝ աշխարհիկ թե՛ հոգեւոր, իսկ ուշ
միջնադարում՝ ԺԵ-ԺԸ. դդ., Նաեւ հայրե-
նասիրական իմաստով. օրինակ՝ Վարդի
ու Սոխակի այլաբանությունը:

Ազգագրական ու եկեղեցական տոնե-
րին վանական համայնիւնների ուխտարու-



ները գուարճանում էին այս կարգի ա-
րարներով, երգ ու պարով, եւ հոգեւորա-
կանութեան խնդիրն էր ժողովրդական
տոները յարմարեցնել, ծառայեցնել Եկե-
ղեցուն: «Մեր թատրոնի ու դրամատուր-
գիայի պատմութեան հետեւեալ ետապը
դրամատիկացիայի ենթարկուած գանա-
զան եկեղեցական ծէսերն ու խորհուրդ-
ներն են: Դրանք արդէն եկեղեցու պատե-
րից յաճախ դուրս են գալիս, եթե քաղա-
քական ու հասարակական պայմանները
նպաստում են լինում, եւ ներկայացում
են եկեղեցու բակում, քաղաքային եւ գիւ-
ղական հրապարակներում, շրջակայ-
քում, գետի ափին եւ այլուր: Սրանք ար-
դէն մեր միստերիաներն են, որոնց նմոշ-
ները գալիս են դեռեւս X-XI դդ.: Դրանց
մի մասը թարգմանական է», - գրել է Կ.
Մելիք-Օհանջեանը («Էջեր հայ միջնա-
դարեան գեղարուեստական արձակից»,
էջ XXI-XXII):

Շարունակությունը՝ էջ 7

3.

Սկիզբը՝ թիվ 12-13

Բնական է, որ մարդկային արժանապատվությունը բարձրացնող հաճելի հաղթանակները մեր ժողովուրդը սիրով ընդունում է, իսկ պարտությունների ամոթը չի հանդուրժում ոչ մի ժողովուրդ։ Ոչ ոք իրեն մեղավոր չի համարում Կարսի անկման, որով էլ Հայաստանի Հանրապետության աղետալի ողբերգության համար։ Իսկ Ե. Չարենցը, ժողովրդի ընտրյալ բանաստեղծ ինչպես էր ընդունում այն։ Իրականում գերզգայուն Չարենցի անմիջական այն սգատեր հարազատն էր, որ կամա թե ակամա համակերպվելու էր «բոլոր սիրելի մեծերին թաղելու» անհրաժեշտության գիտակցությանը։ Սակայն նրա անամոք ցավն ու փրկվորանքն իրականում թարմ էին ու դյուրությամբ չէին ենթարկվել ամենագործիչի՝ ժամանակի ազդեցությանը։ Մեռած հարազատի հիվանդության պատմությունը թերեւս բնական էր ավելի հետաքրքրում է նախ մեծանկարագույն մտերիմներին։ Կարսի զավթի բանաստեղծ Չարենցը, հարազատի սրտացավությամբ, այսօրվա պատմաբանների շարժ առաջ ամեն ինչ գիտեր և առավել ստույգ էր անմիջական աղբյուրներից, ականատների իր իմացությունները լրացնում էր Կարսի վերջին իրադարձությունների ծանոթ և անձանոթ ականատների վկայություններով։ Եվ որպեսզի ունենա ստեղծագործական լիակատար ազատություն ու չկաշկանդվի չափաժողի, թելուզեի ազատ ու տանավորի տաղաչափական

ԻՆՔՆԱԿԵՐՈՎԱԿՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՒ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՑՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



կաղապարներով, իբրեւ ականատես՝ իր ես-ի անունից շարադրել է արձակ՝ ազատություն տալով իր մտքերին ու զգացմունքներին, անմիջական վերաբերմունք արտահայտելով իրողությունների և կերպավորած ծանոթ հերոսների նկատմամբ՝ չզսպելով մեղացող ներքին ցավը, նաեւ շրջանցված վեպի ժանրային որոշ պահանջներ։ Իր հուշերում էր. Օտյանը որդեգրել էր վավերագրերով վեստական պատումի էական մի սկզբունք՝ «Այս մասին կուզեմ բացարձակապես անկեղծ ըլլալ»։ Այս սկզբունքը մեծ երգիծաբանը կիրառում էր՝ ընավ հաշվի չառնելով իր համար նպաստավոր կամ աննպաստ լինելը։ Չարենցը նույնպես հե-

տեղականորեն կիրառել է այդ սկզբունքը՝ չխնայելով իրեն կամ հա-մակերի հերոսներին։ Կարենյան ընթերցողի հետ անձնական կամ համազգային ցավի մասին Արվանի օրինակով իր ես-ի անունից բաց ու անկեղծ գրույցն է, որ այս դեպքում էլ ապահովում է արվեստի բարձրագույն մակարդակ։ Վեպը, ինչպես գիտենք, ունի առաջաբան ու վերջաբան երեք գլուխ՝ Տերյանից մեկ էլ Չարենցից երկու խորհրդանշական բնաբաններով։ Հայտնի է, որ «Նորը» հանդեսում իր վեպը հրատարակելուց հետո՝ Ե. Չարենցը մեկնել արտասահմանյան ուղեւորության, որը մեծ ազդեցություն է ունեցել նրա աշխարհայացքի և գեղարվես-

տական մտածողության բա-րեշրջության վրա, որով էլ նոր շրջափուլ է սկսվել նրա ստեղծագործական կյանքում՝ 1922-24 թթ. պրոլետարական հեղափոխության «ծախ» որոնումներից հետո։ Արտասահմանից վերադարձից հետո էլ նա զգացել վեպը վերածակելու և առանձին գրքով հրատարակելու անհրաժեշտությունը, որով կամեցել է սերունդների գեղարվեստի լեզվով հաղորդել Կարսի անկման մասին բուն ճշմարտությունը։ Ավելին՝ նա ունեցել է վեպը արտասահմանում՝ Վիեննայում կամ Փարիզում տպելու և սփյուռքի հայությանը ծանոթացնելու լուրջ մտադրություն, սակայն չի հանդգնել վեպը տպագրել առանց ժամանակի մեծ հեղինակություններից մեկի առաջաբանի։ Այդպիսի «ապահովագրող» առաջաբան նա ակնկալում էր Աշոտ Յովհաննիսյանից, Պողոս Մակինյանից կամ Ալեքսանդր Մյասնիկյանից։ Դա հասկացվում է Չարենցի Երկերի 6-րդ հատորում տպված 29-րդ և 30-րդ նամակներից։ Ա. Մյասնիկյանին նա 1925 թ. հունվարի 8 թվակիր նամակում Պոլսից ուղղակի գրել է. «... Երկրի Նախընտրվածը եմ հրատարակել Վիեննայում կամ Փարիզում, բայց առանց առաջաբանի չեմ համարձակվում։ Մակինյանին

գրած նամակում ես խնդրել էի այդ մասին, բայց պատասխան չունեմ, եթե գրեիք եւ ուղարկեիք Շահվերդյանին, նա ինձ կհասցներ - եւ ես շնորհակալ կլինեի»։ Սակայն ակնկալված առաջաբանն այդ գործիչներից ոչ մեկը չի գրել, եւ Չարենցը, վեպի կառուցվածքը հիմնականում պահպանելով, 1926 թ. իրականացրել է երկրորդ հրատարակությունը՝ այդ առթիվ հավելելով մի բացատրական առաջաբան։ Թեւե միշտ հնարավոր չէ բացահայտել վիպական հերոսների նախատիպերին, սակայն հեղինակային պատումի ընթացքին հետեւելով՝ կարելի է պարզել շատ բան. հենց զավառական հեղինակը վարձապետ պարոն Մարուքե Դրաստամադյանի կամ Գրաստամադյանի կենսագրության, ինչպես նաեւ բոլշեւիկների կատարած խախտալ խայտառակ դերի մասին։ 1924 թ. սեպտեմբերի 23-ին Աշոտ Յովհաննիսյանին ուղղված նամակում այս կնճռոտ խնդիրների մասին Չարենցն ինքը տվել է հետաքրքիր պարզաբանումներ. «Ապա ես կուզեի մի երկու խոսք ասել այն ուղղումների մասին, որ անելու եմ «Նախընտրված»։ Առաջին եւ ամենախոշոր շուկումը - դա պ. Մարուքեի պատմությունն է։

Շարունակությունը՝ էջ 7

Եվթանագիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Սկիզբը՝ էջ 3

Գարեգին Ա-ն մեր ուշադրությունը հրավիրում է այն հոգեբանական երեւոյթի վրա, թե տառապանքը մեզ դարձնում է ավելի մարդկային, օգնում է մեզ վերագտնելու իսկական կյանքի Աստծու հետ. «Որքան հաճախ ենք մոռանում Աստծուն եւ րախտագիտությունն հայտնել իր բոլոր շնորհների համար։ Եվ միայն ցավն է մեզ ստիպում շրջվել դեպի Նա»։ Ըստ նրա՝ տառապանքը կարող է դառնալ խղճագործում. դա մենք հստակորեն տեսնում ենք սրբերի կյանքում։

Տառապանքը մեզ օգնում է հասկանալ, թե որոնք են հոգեւոր եւ մարդկային ճշմարիտ արժեքները, այն արժեքները, որոնք կրում են մշտնջենականության դրոշմը։

Քրիստոնեական եկեղեցին այն համոզմանն է, որ սպանությունը միշտ էլ տառապանքներից ամենաառաքանիչն է, որ ավելի լավ է տառապանք, քան սպանել խղճա-հարությունից։ Ծապոնական հարակիրին ինքնասպանության ազդից, ապետական ձեւ է, սակայն քրիստոնյայի համար՝ անթույլատրելի։ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն նշում էր, թե քրիստոնեությունը որեւէ ձեւով կատարված ինքնասպանությունը հերոսություն չի համարում։ «Ինքնասպանությունը քրիստոնյայի համար ոչ թե հերոսություն է, - գրում է նա, - այլ թուլություն, դատաւարություն։ Իրական հերոսությունն ապրելն է», - շեշտում է Վազգեն Ա-ն։ «Քրիստոնեությունը խորապես տարբերվում է թե՛ ստիկյան փիլիսո-

փայությունից, թե՛ բուդդայականությունից եւ թե՛ կրոնական ու փիլիսոփայական բոլոր մյուս ուսմունքներից՝ տառապանքների իմաստի առումով», - նկատում է Ն. Բերդյաեւը։ Միայն քրիստոնեությունն է սովորեցնում, որ տառապանքները տանելի են եւ իմաստ ունեն։ Տառապանքներն անտանելի կլինեին, եթե նրանք անիմաստ լինեին։ Սակայն իմաստն այն դարձնում է տանելի։ Ինքնասպանությունը ենթադրում է, որ տառապանքն անտանելի է եւ անիմաստ։ Գարեգին Ա-ն ավելի խորությամբ է զարգացնում այս միտքը՝ նշելով, որ հաճախ տառապանքի կամ հիվանդության պահերին կյանքը մեզ համար ստանում է առավել մեծ իմաստ, քան երբ քաջառողջ ու երջանիկ ենք։ «Հիվանդությունային մահճակալի եւ դաժաղի մոտ կյանքի արժեքը եւ զգացել մեծ այնպես, ինչպես ոչ մի տեղ, որովհետեւ ցավն ու մահն են մեզ պարտադրում տալիս կյանքի արժեքի մասին», - գրում է նա։ Տառապանքի իմաստը խաչը կրելու մեջ է, ինչին մեզ կոչում էր աշխարհի Փրկիչը. «Վեցրորդ քո խաչը եւ արի Իմ ետեկից»։ Հենց կյանքի խաչը կրելու գիտակցությունն է տառապանքը դարձնում տանելի։ Տառապանքի դեմ ապստամբությունը կրկնապատկում է տառապանքը. մարդը տառապում է ոչ միայն իրեն առաջված փորձություններից, այլ նաեւ տառապանքի դեմ բարձրացրած իր խռովությունից։ Հենց խաչն է ինքնասպանության դեմ միակ պատվարը եւ միակ ուժը, որը հնարավոր է

հակադրել տառապանքին։ «Խաչի խորհուրդն ինքնասպանության դատապարտումն է», - եզրակացնում է Բերդյաեւը։

Ի հավելումս արա՝ քրիստոնյաները եւ Եվթանագիայի հակառակորդները նշում են, որ տառապանքը կարող է նվազագույնի հասցվել առանց Եվթանագիայի, եւ ցավով առեցնուն կյանքը կարիք չունի ամեն գնով երկարացնելու։ Ի նպաստ այս կետի է խոսում մարմնական կյանքը կուռքի վերջնաբանությունը քրիստոնեական գաղափարով։ Հատկապես Անգլիական եկեղեցու դիրքորոշումն է շեշտում այս տեսակետը։ Համաձայն դրա՝ չնայած միտումնավոր կերպով մարդկային կյանքին վերջ դնելն արգելված է, սակայն հոգի փաստարկներ կան հոգում այն մոտեցման, որ մարդկական կյանքը պետք է երկարացնել ամեն գնով, երբ նրանք անտանելի ցավի մեջ են։ Ըստ քրիստոնյաների եւ այլ հոսսային Հարումն ու պալիատիվ խնամքը համարում են որպես Եվթանագիայի այլընտրանքներ։ Երբեմն ավանդում էր, որ եթե որակյալ պալիատիվ խնամքը հասանելի լիներ բոլոր նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեին, Եվթանագիան եւ աշակցված մահը գրեթե անկարելու կդառնային։ Նրանք, ովքեր սկզբում են Եվթանագիային, պնդում են, որ ներկա դրությամբ հիվանդների մեծամասնությունը պատշաճ պալիատիվ խնամքի հնարավորություն չունի, եւ, ամեն դեպքում, կլինի մի փոքրամասնություն, որի համար ցավի թեթեւացումն Եական նշանակություն չի ունենա։ Սակայն այս փաս-



տարկի դեմ գոյություն ունի այն հակափաստարկը, որն առաջ է բերվում ոչ միայն Եվթանագիան մերժող քրիստոնյաների, այլեւ առհասարակ Եվթանագիայի հակառակորդների կողմից։ Ըստ այդմ՝ եթե անձն ուզում է մահանալ, կարող ենք վստահ լինել, որ այդ մարդը ոչ թե զանգատվում է հուսահատության մեջ, այլ հստակ որոշում է կայացնում։ Հուսահատության պահերին մեզ կարող է թվալ, որ ուզում ենք՝ մեր կյանքը վերջանալ, որովհետեւ ցավը չափազանց մեծ է, եւ կյանքը տանջալից, սակայն հավանաբար այդ պահերը կանցնեն, եւ մենք ուրախ կլինենք, որ որեւէ մեկը չարձագանքեց մեր խնդրանքներին։ Եվթանագիայի ցանկացած գործընթաց ի վիճակի պիտի լինի հաստատելու հիվանդի իրական դիտավորությունները. ով Եվթանագիա է պահանջում, պետք է լիարժեքորեն տեղյակ լինի իրավիճակին։ Ապատեղեկավորության դիմաց կամ իրավիճակն ըմբռնելու ձախողումը հիվանդին խոցելի են դարձնում այն որոշման անընդամբ, որը նա միզուցե իրականում չուզե՞նար կայացնել։

Շարունակությունը՝ էջ 8

1918 թ. թուրքական արշավանքի շրջանում Հայաստանի եւ հայկական խնդիրների առնչությամբ Գերմանիայի որդեգրած դիրքորոշման, ինչպես նաեւ դաշնակից Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններում դրա անդրադարձի ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի առաջին հանրապետությունը կյանքի կոչվեց բացառապես մայրաքաղաքի հետոսամարտերի շնորհիվ, եւ որ այդ հարցում պաշտոնական Գերմանիայի կամ գերմանացի առանձին բարձրաստիճան գործիչների կողմից որեւէ աջակցություն չի ցուցաբերվել, ինչպես երբեմն ենթադրվում է: Քանի որ պատերազմի վերջնատարում գերմանա-թուրքական հարաբերությունների դիտարկումն օգնում է նաեւ լույս սփռել հարցին առկա լուրջ կարեւոր հետազոտությունների կողմից, ստորեւ կփորձենք փոքր-ինչ հանգամանակից կատարել դրա լուսաբանումը:

Թվում է, թե Գերմանիան պետք է որոշակի պարտավորություններ կրեր Բեռլինի պայմանագրով Թուրքիայի հանձնված Կարսի, Ադրահանի եւ Բաթումի շրջանների քրիստոնյա եւ, բնականաբար, նաեւ հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման հարցում, քանի որ այն մի կողմից Օսմանյան պետության դաշնակիցն էր, նրա վրա իրական ազդեցություն ունեցող միակ տերությունը, եւ մյուս կողմից՝ կարեւոր դերակատարում էր ունեցել Բեռլին-Լիտվոլսկի պայմանագրի վավերացման եւ, բնականաբար, նաեւ հիշյալ շրջանները Թուրքիային հանձնելու գործում: Գերմանիայի կառավարությունը, ինչպես վկայում են գերմանական դիվանագիտական փաստաթղթերը, լիովին հասու էր վերնաշրջանի վտանգներին եւ դրանք կանխարգելելու՝ իր որոշակի պարտավորվածությամբ: Ինչպե՞ս էր, սա-

1918 Թ. ԹՈՒՐԿԱՆ ԱՐՇԱՎԱՆԷՐ ԵՎ ՀԱՅԿԱՆ ԽՆԴԻՐ ԳԵՐՄԱՆ-ԹՈՒՐԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



կայն, դա իր գործնական դրսեւորումն ստանում:

Գերմանական կառավարությունը թուրքական զորքերի առաջնադասման դեպքում հայկական կոտորածների բացառումը եւ թուրքական տիրապետության տակ անցած շրջաններում հայ բնակչության հանդեպ լուրջ դիրքորոշման ցուցաբերումը՝ դեռ Բեռլինի պայմանագրի ստորագրումից առաջ՝ 1918 թ. հունվարին, Օսմանյան պետության արտգործնախարարի եւ ֆինանսների նախարարի հետ տեղի ունեցած հանդիպումներում դարձրել էր բանական խնդիր: Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ փոքր-ինչ ավելի ուշ՝ մի կողմից Օսմանյան Թուրքիայի Մեծ վեզիրի, արտգործնախարարի եւ նրա ներկայացուցիչ

Հալիլ Բեյի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի կանցլեր Իլհաս Գերոգ ֆոն Յերտինգի, պետքատուղար Ռիխարդ ֆոն Ջյուլիմանի եւ դեսպան Յոհան Յալիրիս ֆոն Բեռնշտորֆի միջեւ կայացած բանակցություններում թուրքական կողմը չէր զանազան ամենապետեղ հավաստիացումները՝ հայերի հանդեպ իր «խաղաղասիրական» մտադրությունների վերաբերյալ: «Երբ Բեռլին-Լիտվոլսկի զինադադարի հաստատումից հետո մոտեցել էր այն ժամանակ ռուսների կողմից գրավված՝ արեւելյան Անատոլիայի գավառների ազատումը, նշում էր Գերմանիայի արտգործնախարարության պետքատուղարի տեղակալ Հիլմար ֆոն դեր Բուշեն հարցի շուրջ մարտի 21-ին ռալիստագում իր կատարած պար-

զաբանումների ժամանակ, - մենք հայերի հանդեպ վարքագծի հարցի առնչությամբ անմիջապես կապվեցինք թուրք պետական այրերի հետ եւ նրանք ասացին, թե Թուրքիայի ամենաանփական շահերի, նաեւ իր դաշնակիցների հետ նրա փոխհարաբերությունների առումով վերջապես կարելի էր, որ թուրքական զորքերի մտնելու ժամանակ հայ բնակչության հանդեպ անկարգությունները բացառվեն, եւ որ սկզբից եւեթ քրիստոնյա եւ մահմեդական տարրերի միջեւ խաղաղ փոխհարաբերությունների հիմքեր ստեղծվեն: ...Կայսերական կառավարությունը Հայկական հարցի նշանակությունը թուրքական կառավարության աչքերին դեմ անելու ոչ մի առիթ չէր տեսնում եւ կատարել է որոշակի առաջարկներ, թե ինչպես կարելի է խուսափել հետագա արյունահեղությունից եւ տեւականորեն խաղաղ իրադրություն ստեղծել: Նա մասնավորապես շտապ կերպով խորհուրդ է տվել մուսուլման գործող գործակալների կազմակերպությանը պահպանել, հայ կառավարության ջոկատներին կամուրջի եկթարկվելու կոչ անել, եւ եթե նրանք ինտենտեյն այդ կոչին, նրանք տրամադրվել համաներում: ... բացի այդ՝ նաեւ անակազմված կայացվել ու սկսել դեպի կայսրության խորքերը բռնագաղթվածների վերադարձը, ինչը փոխարկվեց շրջանների հետ կապված՝ ներկայիս ռժմարությունների պայմաններում, անշուշտ, իրագործելի չէ:

Շարունակություն՝ էջ 8

Սկզբը՝ էջ 4

Այսպիսով՝ Ռասելի գրածից պարզվում է, որ տարիներ առաջ, ծանոթանալով Էմինի որդու՝ Վրտաշեսի հետ, հյուրընկալվելով նրան «Վերնատանը», ծանոթացել է բավականին թանկարժեք նյութերի: Ռասելը շարունակում է. «...Նա (Էմինի որդին) ինձ ցույց տվեց եղի՜ք Չարենցի ձեռագրերի լուսապատճենների մի թղթապանակ, որը պահպանվում էր Չարենցի մեքենագիր բանաստեղծությունների (որոնցից մի քանիսի լուսանցքներում կային բանաստեղծի ձեռագրով արված նշումներ) եւ Չարենցի ստեղծագործության անհիշելի տարատեսակ տպագիր նյութերի հետ»: Ահա Էմինի որդու թույլտվությամբ էլ Ռասելն իր հետ Ամերիկա եւ տարել Չարենցի ինքնագրերի նմանահամաներները (գրված 1935-1937 թթ., հիմնականում՝ 1936 թ. ամռանը Շաղկաձորում) եւ հիմա էլ իր հերթական հրապարակումներով Ամերիկա եւ հայտնաբերում՝ լույս աշխարհի հանելով միմյան իրեն հայտնի եւ գիտական աշխարհին անհայտ ժառանգության էջերը:

Լինելով միասեռական եւ այդ համաճարակի համազված քարոզիչ՝ Ռասելը նպատակադրված ձեւով չարենցյան ինքնագրերը փորձում է ներկայացնել ու մեկնաբանել միմյան այդ տեսանկյունից՝ այդ կապակցությամբ անելով՝ յայտնի գրառումներ. «Դրանցից մեկը, որը ներկայացվում է ընթերցողին, ըստ էության միասեռականի զգացողությունների վառ նկարագիր է», «... որպեսզի գրեթե միշտ հետերոսեքսուալ բնույթի են», «Ինձ հայտնի չեն փաստեր այն մասին, թե երբ է Չարենցը հայտնաբերել իր բիսեքսուալությունը, կամ դա ինչ հետախնդրել է ունեցել», «... հոմոսեքսուալիզմը նրա երկրորդ հայտնվում է բանաստեղծի կյանքի միայն վերջին երկու տարիներին»:

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱՎԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Միասեռականությունը ԽՄԽՄ-ում քրեական մեղք համարվելով 1933-ից: Ռուսաստանում ապա-քրեականացվեց 1993-ին, Հայաստանում՝ 1997-ին:

Ռասելն իր նպատակային մտաշարժն իրականացնելու ճանապարհին դիմում է իրեն ցանկալի այլ օրինակների. «1993 թ. պրոֆ. Ուայթեյթերգի տանը Լեյդնում եւ մի երիտասարդ հայաստանցի գիտնականի հանդիպեցի, ում քաղաքական ապաստան էին տրամադրել Լոնդոնում, քանի որ հայրենիքում միասեռականության համար հետապնդումների էր ենթարկվել: Չնայած Լյու-Յորքում գործում է միասեռականների հայկական ընկերակցություն (AGLA), ինչի անդամները եռանդուն մասնակցություն են բերում տարածաշրջանի հանրային, գրական միջոցառումներին, ինչպես նա, իմ գնահատմամբ, ցայսօր ինձ հանդիպած հայազգիների շուրջ մեկ երրորդը գեյ կամ լեսբոստիկ է...»: Իր հաշվարկների մեջ Ռասելը՝ որպես «հայագետ», հա-

վանաբար շատ բան պայմանավորել է իրենով:

Ի վերջո, Ռասելը կառչում է տրամաբանական ոչ մի հիմնավորում չունեցող այսպիսի բանաբանին. «1998 թ. Լյու Յորքում բնակվող ծանոթ մի հայ լեսբոստիկ, ով ուսանել էր Երեւանի համալսարանում, ինձ ասաց, որ Չարենցի միասեռական լինելն այնպեղ բոլորին է հայտնի, որ նրա սիրելիներից մեկն այժմ էլ ողջ է»: Սա կատարյալ ցնդաբանություն է, որ միասեռական պարուն (թե՛ տղիկն) իրենա շրջնառում է, որպեսզի այնուհետ գիր. «Քանի որ կեղծ գիտական անթաքնյալ հակահրեական հորձանները սովորական երեւոյթ են մեթոդաբանական մամուլի մեծ մասում, կարելի է ենթադրել, որ բանաստեղծական երկերի այս հրապարակման կապակցությամբ կինը մեղադրանքներ դրա թաքնված անբարոյ նպատակների մասին»:

Այո՛, կինը, որովհետեւ, որ՛ը, պարուն (թե՛ տղիկն) Ցեյնս Ռասել, կատարյալ հակադեմոստրական ճանապարհի վրա գեւ է Չարենցի

զգայավառ ու երոտիկ բանաստեղծություններին տալիս եւ ձեռքակալի մեկնաբանությունը, ուստի լսեք նաեւ բացատրություններ Չարենցի մնացորդ անտիպ ժառանգության գիտական հրատարակման կապակցությամբ:

Թե ի՞նչ պայմաններում է ի՞նչ պայմաններում է թույլատրվել Չարենցի ինքնագրերի պատճենահանումն ու արտահանումը (ինչի մասին տարբեր աղբյուրներով ակնարկում է Ռասելը)՝ Արտաշես Էմինը թույլ տվեց ինձ պատճենահանել պահոցի բոլոր նյութերը, թեւէ դրան կտրակա-նապես դեմ էր Էմինի այրին, ով գտնում էր, որ ձեռագրերը պետք է Հայաստանում լույս տեսնեն...», առաջմ թողնում ենք մի կողմ, թեւէ այդ կապակցությամբ եւս ինչ-ինչ բան հայտնի է:

Չարենցի գիտությունն մեզ Ռասելի պատահական եւ անտեղյակ ներկայությունը ցույց տալու համար դիմենք փաստերի: Ռասելը գրում է՝ ՉԱԿԳԻԶ-ում (Заквказское государственное издательство - Անդրկովկասյան պետական հրատարակչություն) «Չարենցի աշխատել է որպես գլխավոր խմբագիր մինչ երեսու-նականների կեսերը»:

Չարենցի կենսագրության մեջ այսպիսի փաստ չկա: Գրում է. «Իր վերջին հրատարակած հատորը՝ «Գիրք ճանապարհի»-ն (1933)»... Սխալ՝ է, գիրքը հրատարակվել է 1934-ին, 1933-ը չկայացած հրատարակության տարեթիվն է:

Երկերի ժողովածուի վեցհատորյակը տպագրվել է ոչ թե 1962-1967 թթ., ինչպես գրում է տույն անձնակազմությունը, այլ՝ 1962-1968 (IV հատորը տպագրվել է VI-ից հետո): «Իր կյանքի օրոք Չարենցը մե-

ղադրվում էր «թրքադաշնակության» եւ դաշնակցականների համակրելու համար...»:

Այո՛, Չարենցը, ինչպես յուրաքանչյուր արժանապատիվ հայ, թուրքադաշնակ էր, բայց դաշնակցականների (բացառությամբ առանձին անհատների) չի համակրել, ընդհակառակը, գրել է նրանց դեմ եւ ոչ մեկ անգամ:

Մեկ այլ կոպիտ վրիպում. «Ձերթակալությունից մի քանի ամիս առաջ իր պատանի բարեկամ Էմինին փոխարինեց պաշտոնային նյութերում պահպանվել է նաեւ բանաստեղծի հետեւյալ գրու-թյունը...»:

Թող իմանա Ռասելը, թող լսեն մյուսները՝ Չարենցը Էմինին ոչ մի թուրք չի փոխանցել, այն էլ՝ «այա-հոցային նյութեր»։ Դրաք Էմինը յուրացրել է Չարենցի ձեռքակալության ժամանակ եւ նրա մահից հետո: Իսկ «յուրացնել» բառն այստեղ հոմանիշ է սեփականեղուն, գողանալուն, թացնելուն, ծածուկ թալանին...:

Եվս մեկ վրիպում. գրում է՝ Չարենցի ընտանիքին դուրս են արել ԶԳԲ Շաղկաձորի տեղից՝ «Աղբյուրներից ժամանած գործիչն տեղա-վորելու նպատակով»: Սխալ՝ է. ոչ թե Աղբյուրներից գրող էր ժամա-նել, այլ սենյակը հատկացրել են 1937-1941 թթ. Հայաստանի ար-դարդատուության ժողովում եւ ՀԿ(Բ)Կ Կենտրոնի անդամ Ալի Մա-մեդով Սաֆար Հուսեյնյանից: Ումանց վկայությամբ՝ խոսքը Սա-ֆար Ալի Մամեդովի մասին է, ով 1937-ին եղել է Երեւանում լույս տեսնող «Կոմունիստ» (1939-ից՝ «Սովետ Երմանիստական») արդե-շաներեն թերթի խմբագիրը:

Շարունակելի
Հայկի ԳԱՄԱՐՈՅՆՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5

Վեպի 1-ին մասում նա գավառացի հարբեցող վարժապետ է, ծնունդ է երեխաներին եւ այլն, 2-րդ մասում - դաշնակցության անպրիկնեցիկ հակառակորդ, 3-րդ մասում - բոլշեւիկ... 2-րդ հրատարակության համար եւ հիմնովին կարգադրեմ վեպս, կանեմ մի շարք կրճատումներ, ինչպես եւ կավելացնեմ մի շարք հատվածներ՝ ավելի ուռուցիկ դարձնելու համար բոլշեւիկների արածները - մի խոսքով հույս ունեմ, որ այդ շտկումներից հետո վեպս մի բանի կմանի: Լավ կլինեք, եթե Դուք գրեիք ինձ Ձեր նկատողություններն այդ մասին, թե ի՞նչ տեղեր հարկավոր է շտկել, ուղղել կամ կրճատել: - Եթե միայն ժամանակ ունեք եւ կարող եք նման մի աշխատանքի տրամադրել մի-երկու երեկո:

Հույս ունեմ, որ կգրեք առաջաբանը...» (6, 415-416): «Նորքում» տպված վեպից Չարենցը լիարժեք գոհ չի եղել, եւ խոստացած շտկումներն անելուց, բոլշեւիկների արածներն ավելի ուռուցիկ դարձնելուց հետո նոր պիտի «մի բանի նմաներ», եւ այն էլ պիտի հրատարակեր Ա. Չովհաննիսյանի կամ ուրիշ մի հեղինակության առաջաբանով: Սակայն նա խոստացած ուղղումները հիմնականում, Ա. Չաքարյանի ասելով, թեեւ չի արել, բայց կատարել է արտաքուստ «մանր» թվացող շտկումներ, հատուկ ուշադրության արժանացնելու համար ընդգծել կամ ցրվել է շարել տվել ինչպես ամբողջական կարեւոր մտքեր, այնպես էլ առանձին բառեր ու արտահայտություններ: Սա էլ մշակման ձեւ: Բայց առանձին գրքով հրատարակության համար ո՞չ Ա. Չովհաննիսյանը, ո՞չ Գ. Մակինյանը, ո՞չ էլ որեւէ մեկը առաջաբան այդպես էլ չեն գրել: Որքան էլ 1923 թ. մարտի 10-ին Կարեն Միքայելյանին եւ 1924 թ. փետրվարի 8-ին Մամիկոն Գեորգյանին ուղղված նամակներում Չարենցը հայտնել է, թե ինքը 1923 թվից «օրգանապես հեռացել» է Նաիրիից ու Նաիրականից եւ այդ պատճառով վեպը չի կարողանում ավարտել, սակայն ճշմարտությունն այն է, որ նա պարզապես չանցել է հեռանալ Կարս քաղաքի, Կարսի նահանգի եւ հայ-

ԻՆՔՆԱԿԵՐՈՎԱԿՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՅՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



պես էլ չեն գրել: Որքան էլ 1923 թ. մարտի 10-ին Կարեն Միքայելյանին եւ 1924 թ. փետրվարի 8-ին Մամիկոն Գեորգյանին ուղղված նամակներում Չարենցը հայտնել է, թե ինքը 1923 թվից «օրգանապես հեռացել» է Նաիրիից ու Նաիրականից եւ այդ պատճառով վեպը չի կարողանում ավարտել, սակայն ճշմարտությունն այն է, որ նա պարզապես չանցել է հեռանալ Կարս քաղաքի, Կարսի նահանգի եւ հայ-

կական մյուս տարածքների կորստյան ցավից ու ողբերգությունից, որը մարդկայնորեն անկարելի է եղել: Հայտնի է, որ արտասահմանյան ուղեւորության ընթացքում, գաղթավայրերի հայրենագուրկ հայության հետ շփվելով, կոմունիստ Չարենցը հանդիպել է դաշնակցական երեք նշանավոր գործիչների՝ Զոմմու՝ Վահան Նավասարդյանին, Վեներտիկոմ՝ Ավետիք Իսահակյանին եւ Փա-

րիզում՝ Ավետիս Ահարոնյանին: Փոխվել է «եգիպտական բուրգերից մինչեւ ֆրանսիական իմպրեսիոնիստների վերջին նկարներն ուսումնասիրած» Չարենցի աշխարհայացքը. ցնդել է համաշխարհային հեղափոխության եւ «աշխարհը հանուր խնդրության փողոց», «որոշմեւի» ագիտականերով աշխարհը նվաճելու» ռոմանտիկական պատրանքը, եւ բանաստեղծը «խորշակյալ ու անդուռ Արարայան դաշտում» հայրենիքի անորոշ ապագայի հանդեպ կանգնած է մենակ ու անօգնական, ինչպես նա ինքը պիտի բանաձեւեր «Գիրք ճանապարհի» ժողովածուում եւ հետագա գործերում ու մանավանդ «Տետրապոլիս» բանաստեղծական քառաշար ստեղծելու մեջ: Վերջին ստեղծագործություններից մեկի՝ «Ն. Տ. -ի (Ներսիկ Ստեփանյանի) հիշատակին» ընծայագրով «Երկու տոնեք» (առավել հայտնի է «Որպես գորշ, դեղին տերեւներ» սկզբնատողով) պոեմի պահպանված պատառիկներում: Բայց վերադառնալով «Երկիր Նաիրի» վեպում ինքնակերպավորված Ե. Չարենցին:

Շարունակելի
Սամվել ՄՈՐԻՄՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

Յայտնի է, որ միստերիաներն Արեւմուտքի եկեղեցիների տոներին կատարում էին եկեղեցուց դուրս ու ներս, եկեղեցու շուրջը հաւաքուած ուխտաւորների ուրախ արարքներով, ինչպէս եւ մեր եկեղեցական տոներն էին անցնում ուխտատեղիում հաւաքուած ժողովրդի երգ ու պարով, երաժշտական-ծիսական արարողութիւններով. հնարաւոր չէ՞ր, որ եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ ինչ-որ հատուած-երգեր (օրինակ՝ երգ երգոցից), կատարուէին ազգագրական խմբերգերին զուգահեռ՝ կապելով օրուայ խորհրդին:

Միջնադարեան բանահիւսութիւնը հարուստ է քնարական բանաստեղծութիւններով, որոնց մէջ խօսքի ծաւալման միջոցը տրամախօսութիւնն է: Ընդհանրապէս արեւելեան հանդիսականը մեծ հետաքրքրութիւն էր ցուցաբերում գուսանական վեճերի նկատմամբ, որոնցով հաղորդում էին ամենաբազմազան գիտելիքներ, անցեալի նշանակալից իրարարձոյթիւններ, տարբեր բնագաւառների՝ գիտութեան, մշակոյթի, կենցաղի վերաբերեալ առաջադրուող առեղծուածներ ու լուծումներ: Բայց դրանք եւս հեթանոսական դարերի ժառանգութիւն էին, եւ Եկեղեցին բնականաբար իւրովսան պիտի օգտագործեր այդ ամենի հնարաւորութիւնները, իբրեւ այլընտրանք առաջարկել իր գաղափարները, ժողովրդին կարելու անցեալի մշակոյթի՝ իր համար անցանկալի դրսեւորումներ: Այս պարագայում ստեղծագործութեան նիւթ էին ծառայում Աստուածաշնչի, յատկապէս Նոր Կտակարանի պատումները:

Սերունդներին նորովի դաստիարակելու յարցը յայտնի ծաւալում ունեցաւ հայ քերթութեան անդաստանում: Այս իմաստով գուարճանքի նոր միջոցներից մեկն էր *հանելուկ* կամ *առակ* կոչուած փոքր ծաւալի գրական տեսակը (չափածոյ թէ արձակ), որ վկայուած է արդէն Ե. դարի մատենագրութեան մէջ: Դրան առաւել մեծ կարեւորութիւն տուեց Ներսէս Շնորհալին՝ նպատակ ունենալով ժամանցն իմաստալից, նպատակամետ դարձնել: «Եւ զի յամենային հանճարեղ էր Ներսէս, արձանագրել է Կիրակոս Գանձակեցի պատմիչը. արար է առաքյալ խորհրդաբարս ի Գրոց, եւ հանելուկս, զի փոխանակ առասպելաց զայն ասացես ի գիտարբուս եւ ի հարսանիս» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կարո Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 222):

Թատերականութիւնը յետայսու քրիստոնեական տոների անբաժան մասն էր: Եւ եկեղեցու պայքարի միջոցներից մեկն էր *հին տոներին նոր տարազում տալը*, որ Բիւզանդիայում, օրինակ, վերջնականապէս կերպաւորուեց Ժ. դարում (*Культура Византии. Вторая половина VII-XII в. М., 1989, էջ 606-607*): Միստերիաները Բիւզանդիայում բեմադրուել են տաղաւար տոներին եւ ըստ երեւոյթին ընկալուել իբրեւ պաշտօնեղութեան, արարողութեան մի իրօրինակ շարունակութիւն: Կարելի է ենթադրել, որ Հայ Առաքելական Եկեղեցու պարագան շատ հեռու չէր Բիւզանդականից: Դա բնորոշ էր արեւելեան քրիստոնեական եկեղեցուն ընդհանրապէս:

Թարգմանական պարականոն բնագրերի մէջ երբեմն հանդիպում ենք թատերական ձեւով, տրամախօսութեամբ,

հարց ու պատասխանով գրուած գործերի: Այդ երեսուրթը խորթ չէր ժողովրդական բանահիւսութեանը, ինչպէս եւ միջնադարեան տաղերգութեանը (այս կարգի երկերից յիշենք վկայաբանական տաղերը, Կարդի ու Սոխակի սիրավեպը, Երկնից ու Երկրի, Հոգու եւ Մարմնի կիճաբանութիւնները, սրանց բանաստեղծական մշակումները, որ նաեւ երգում էին: Տրամախօսութեամբ կառուցուած այդպիսի մի ստեղծագործութեան (Ներսէս Մոկացու «Կիճաբանութիւն Երկրի եւ Երկրի») կապակցութեամբ Ասատուր Մնացականեանը գրել է. «Պոեմի դրամատիկական ձեւը հիմք է տալիս կարծելու, որ այն յարմարեցուած է եղել ներկայացման: Այդպիսի նիւթերի ներկայացումը կատարում էին գուսանները» (Աս. Մնացականեան, Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, Եր., 1956, էջ 519):

Հասկանալի է, որ եկեղեցու վերապահ մօտեցումը թատրոնի ու գուսանական տեսիլների նկատմամբ յուզել է նաեւ բոլոր դարերի հոգեւոր գործիչներին, այդ թւում եւ՝ Գրիգոր Մարաշեցուն:

Այս հեղինակի ապրած մօտաւոր ժամանակը պարզելու միակ թուականը 1149-ն է:

Հալեպի Չանգի ամիրան 1144-ին գրաւեց Եդեսիան: Հիւսկ տարի անց Նոյն բախտին արժանացաւ Գերմանիկ-Մարաշը: Հայ մշակոյթի այս խոշոր կենտրոնների անկումն առիթ դարձաւ մատենագրական կարեւոր յուշարձանների ստեղծման: Ներսէս Շնորհալին իր եղբորորդի Ապիրատի հաղորդած անմիջա-



կան տպաւորութիւնների հիման վրայ գրեց հայ բանաստեղծութեան հրաշալիքներից մեկը՝ «Ողբ Եդեսիոյ»-ն, եւ իրապատում պատկերներով վեր հանեց այդ քաղաքի բնակիչ չորս ազգերի (ասորի, հայ, յոյն, դարձաւաղցի) տառապանքն ու մշակութային կորուստները: Շատ չանցած՝ 1149 թ., Իկոնիայի Մաստուս սուլթանի՝ Մարաշի արշաւանքին Ներսէս Շնորհալին արձագանքեց իր չափածոյ յիշատակարաններից մեկով:

Ի ժամանակ յոյժ անբարի,
Մինչ Գերմանիկն առեալ լինի,
Ժամանեցին աշխարհի գոյժ՝
Քրիստոնէից գոյով անոյժ:
Թուական Հայոց հինգ հարերւր Լ՝ ութ
Նաեւ ութսուն Է՝ երկուրդ եւ ութ...
Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վեներտիկ, 1830, էջ 361

Շարունակելի
Արշակ ՄՈՐԻՄՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՍԱՐԴԱՐԱԴԱՏԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏ - 100 1918 թ. ԹՈՒԲԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆԲԵ ԵՎ ՀԱՅԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆ-ԹՈՒԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սկզբը՝ էջ 6

...Հստակ հավաստիացումներ ստանալուց հետո մենք իրավունք ունենք հավատալ, որ (թուրքական - Ա. Յ.) կառավարությունը վճռել է հայերի հանդեպ մեղմ լինել և կկարողանա անմեղ բնակչությանը առանձին իրոսակախմբերի գործողությունների համար պատասխանատու չդարձնել ու կանխել այնպիսի դեպքերը, ինչպիսիք տեղի են ունեցել 1915 թ-ին...» (տե՛ս *Der Völkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Herausgegeben von Wolfgang Gust, Springe 2005, S. 567*).

Չնայած պետքարտուղարի տեղակալը չէր նշում այդ խոստումների իրականացման երաշխիքների կամ վերահսկման լծակների մասին, բանի որ դրանք չկային, եւ հարցի վերաբերյալ գերմանա-թուրքական երկխոսությունը կառուցվում էր բացառապես «հավաստիացումների» եւ «վստահության» հիմքի վրա, այնուամենայնիվ, ինչպես վկայում են դիվանագիտական տեղեկագրերը, գերմանական կառավարությունն ակնախտորեն ոչ միայն չէր քաջալերում Բրեստի պայմանագրով թուրքիային հանձնվող շրջանների հայաթափումը, այլեւ դրանում ամենելին շահագրգռված չէր: Միաժամանակ Բրեստի պայմանագրի ընդունումը նա անխուսափելի էր համարում հայերի համար եւ ձգտում էր իր ազդեցությունը գործադրել հայկական կողմին թուրքական կառավարության երաշխիքների եւ հավաստիացումների հիման վրա պայմանագրի ընդունման մտքի հետ հաշտեցնելու համար:

Երբ Տիպաիզոնում արդեն սկսվել էին բանակցությունները, եւ թուրքական կողմն Մնդրկովկասյան սեյմին փորձում էր պար-



տադրել ընդունել Բրեստի պայմանագիր՝ Մնդրկովկասի վերաբերող հոդվածը, Գերմանիան իր հերթին մտահոգություն էր արտահայտում Մնդրկովկասյան սեյմի, այդ թվում՝ հայկական կողմի ընդդիմության հանդեպ եւ անընդունելի համարելով՝ մի կողմից Թուրքիայի դեմ պատերազմելու, մյուս կողմից՝ անգլիացիների կամ որեւէ այլ երրորդ ուժի աջակցությանն ապավինելու՝ հայկական շրջաններում ի հայտ եկող կոչերը, տարածաշրջանում «խաղաղ իրադրության» ստեղծման համար անհրաժեշտ էր համարում, որ հայերը հրաժարվեն ընդդիմության փորձերից, անկախության իրենց ձգտումներից, որոնց «անհուսալիությունը այժմ ստիպված են գիտակցել», եւ ընդառաջելն թուրքերի կողմից առաջարկվող հաշտությանը: Հայկական կողմի մեջ այդ դիրքորոշումը ձեւավորելու համար հարկ էր համարվում օգտագործել միջեւ եւս հայերի գերմանացի բարեկամների ազդեցությունն ու հեղինակությունը:

Հետագայում հայացքով իրադրությունը քննելիս, անշուշտ, կասկածի ենթակա չի կարող լինել, որ Մնդրկովկասյան սեյմի եւ, բնականաբար, նաեւ դրա կազմի

մեջ մտնող հայ գործիչների կողմից Բրեստի պայմանագրի ընդունումը ստեղծված իրադրությունում միակ իրատեսական քայլը կլիներ, քանի որ դրանով, չնայած Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանների հանձնմանը, այնուամենայնիվ, կարող էին կանխվել հետագա բոլոր չարիքները: Թուրքական պահանջը, սակայն, ինչպես սեյմի, այնպես էլ Հայոց ազգային խորհրդի կողմից մերժվեց, որից հետո, ինչպես հայտնի է, սկիզբ առան պատերազմական գործողությունները: Արդեն մարտի 13-ին թուրքերը մտել էին Երզրում, իսկ ապրիլի 10-ին գրավեցին նաեւ Մարիդա-միշը: Նրանց գրավումներն ուղեկցվում էին տեղում մնացած հայերի կոտորածներով եւ այլ՝ ամենաազարիւրելի ոճրագործություններով:

Ինչ վերաբերում էր նոր իրադրությունում երկու դաշակիցների միջեւ իրականացվող երկխոսությանը, ապա թուրքական կառավարությունը, հավատարմի մնալով իր ավանդական գործելակերպին, գերմանական դաշակիցին շարունակ հավաստիացումներ էր տալիս հայ բնակչության հանդեպ անկարգությունների բացառման եւ խաղաղ փոխհարաբերությունների հաս-

տատման՝ իր ցանկությունների մասին (Վեհիբ փաշան մինչեւ իսկ հետագրով Ամենայն Հայոց Կաթողիկոսին էր հավաստել, թե «Օսմանյան պետությունը խոստացել է ապահովել ժողովրդի ինքը եւ պատիվը» (տե՛ս *Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 36*), իսկ Գերմանիան փորձում էր իր՝ նմանապես արդեն ավանդական դարձած բարեկամական ինչեցունքներով ու նախագուշացումներով «նպաստել» դրանք իրագործմանը: Այդօրինակ նախագուշացումների անարդյունավետության մեծ փորձառություն ունեցող պաշտոնական Գերմանիան, անկասկած, որեւէ հիմք չէր կարող ունենալ իր դաշակից խոստումներին հավատ ընծայելու համար, եւ, այնուհանդերձ, նա այդ հարցում թուրքական կողմի վրա ազդելու այլ ճանապարհ, քան բարեկամական դիվանագիտական երկխոսություններ էր, չէր տեսնում: Իսկ արդյո՞ք ինչպիսի «ընթացք եւ արդյունք ուներ այդ երկխոսությունը:

Գերմանական կառավարությանը որոշակի անհանգստություն էր պատճառում Բրեստի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական շրջաններում

վերստին սանձազերծված ազգայնամոլական եւ պանթուրքական տրամադրությունների շեշտակի վերելքը, որ հիղ էր անկախատենելի հետեանքներով: Մարտի 17-ին գերմանական արտգործնախարարությունը Բուխարեստում գտնվող պետքարտուղար Զյուլիմանին տեղեկացնում էր, որ Կոստանդնուպոլսում Մեծ վեզիրի բացակայությունը (որը նույնպես Բուխարեստում էր գտնվում) խիստ ցավալի էր, քանի որ թուրքական «բոլոր ազդեցիկ շրջանները հաղթանակի, նացիոնալիզմի եւ պանիսլամիզմի գլխավոր կուրսի մեջ են», եւ միայն Թալեաթը կարող էր սանձերն ձեռքում հավաքել եւ, կատարելով հայերի հանդեպ նախկինում հանձն առած պարտավորությունների համապատասխանող հայտարարություններ, «հանդարտեցնել» հակահայկական տրամադրությունները: Հստ այդմ՝ հետագրում պետքարտուղարին առաջարկվում էր Թալեաթին դրել, որ նա դեռ Բուխարեստից շտապ կերպով հրահանգներ ուղարկել Կոստանդնուպոլիս՝ հայերի հանդեպ իրագործվելիք բաղադրականության վերաբերյալ:

Ինչպես տեղեկացվում էր պետքարտուղարի՝ մարտի 20-ի պատասխան հեռագրում, նա այդ մասին Թալեաթ փաշայի հետ զրույց էր ունեցել: Վերջինս, սակայն, նշել էր, որ այդ առումով նա Բուխարեստում շատ բան չէր կարող անել, սակայն Դ. Պոլիս վերադառնալու պես մտադիր էր հրամանագիր հրապարակել համարման մասին: Դա, իհարկե, թուրքական նոր հայաշնչից գործողությունների համար ժամանակ շահելու նպատակ հետապնդող հերթական քայլ էր, քանի որ հետագայում ես այդ, այսպես կոչված, «համաներումը», որը թուրքերի կողմից գրաված շրջաններում պետք է դառնար հայերի դեմ ոսկանդությունների արգելման երաշխիք եւ միաժամանակ՝ դեռեւս կենդանի աջորդակների հնարավորություն տար վերադառնալու իրենց հայրենի բնակավայրերը, երբեք չիրագործվե:

Հարունկելի
Սուսաննա ՂԱԺՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Եվթանագիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Սկզբը՝ էջ 5

Սրան հետեւում է մյուս փաստարկը: Կարող ենք մենք վստահ լինել, որ սխալներ չեն պատահի: Ենթադրենք, թե ինչ-որ մեկն ընտրում է մահը, ուրովհետեւ նրան ճակատագրական անբուժելի հիվանդության ախտորոշում է տրվել: Այնուհետեւ, նրա մահից հետո, պարզվում է, որ ախտորոշումը սխալ էր: Ա. Նալչալյանի հիշատակված գրքում կարդում ենք, որ ֆրանսիացի մի բժիշկ դիֆտերիայով տառապող իր երեխային Եվթանագիայի միջոցով ազատում է տառապանքներից, բայց մեկ ամիս անց պրոֆեսոր Ռուս հայտնաբերում է հիվանդությունը բուժող շիճուկը: Ուստի ուրախությունն պիտի լինի ախտորոշման վերաբերյալ:

Վերջիվերջո կամավոր Եվթանագիան բժշկի աջակցությունը վայելող ձեռք մեջ ուղղակի անհատական խնդիր չէ: Այն ազդում է ուրիշների եւ հասարակության վրա՝ իբրեւ մի ամբողջության, նաեւ բժշկի, որ աջակցում է, բուժօրյութերի, որոնք խնամում են հիվանդին, այն հուպիտալի,



որտեղ տեղի է ունենում եւ համայնքի վրա առաջադրված: «Մենք եւլու անհատական իրավունքի փաստարկը պետք է հակադրվի այլ համայնքին, որին պատկանում է տվյալ անհատականությունը», - նկատում են մի շարք բարոյագետներ: Օրինակաւացումը կարող է արժեզրկել հիվանդների եւ առողջապահության մասնագետների միջեւ առկա վստահությունը: Ավելին՝ եթե Եվթանագիան եւ աջակցված ինքնաս-

պանությունը հասանելի լինեն՝ որպես հեշտ եւ էժան ընտրություն, ապա այն կարող էր խոչընդոտել առողջապահական ծառայությունների՝ պատշաճ տեքմիայի եւ պալիատիվ խնամք գործադրելու համար: Արդյունքում ավելի շատ մարդիկ վերջ կդնեն իրենց կյանքին, - նշում է Մեստերը:

Գրեթե բառորդ դար առաջ գրված գործում, որը մինչեւ օրս Եվթանագիայի լավագույն քննարկումներից մեկն է համարվում, Փոլ Ռամզին փորձել է «մեռնողին նայել խնամելու» էթիկա շարադրել: Այսպիսի էթիկան, ենթադրում է նա, կերթի միմյանց հակառակ

երկու ծայրահեղություններն էլ, ինչպես օրինակ, երբ հրաժարվում են ընդունել մահը՝ շարունակելով նրա դեմ պայքար, պայքար, որն անօգուտ է, կամ երբ փորձում են արագացնել վերահաս մահը: Սրանցից ոչ մեկն էլ չի կարող մեր հարազատների համար դիտվել որպես խնամք, սրանցից յուրաքանչյուրը լքման ձեւ է: Ուստի մեր քրիստոնեական առաջադ-

րանքն է չլքել տառապանքի մեջ գտնվող հիվանդներին, այլ «մեծացնել խնամքը» նրանց հանդեպ, երբ նրանք ապրում են իրենց կյանքի պատմությունը: Մենք պետք է ձգտենք ավելի արդյունավետ ձեւեր գտնել՝ նրանց տառապանքը թեթեւացնելու համար:

Հարունկելի

Սուսաննա ՂԱԺՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտառնայա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Միջազգային հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kristhayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.8.2017 թ.

Տպագրանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ